«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3101 Գյումրի, Վարպետաց 176, 301 հեռ. +(374 312) 6-69-92,
+(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ infi@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

ԱԳԿ Գյումրու տ/ս ղեկավար - անշարժ գույքի
պետական ռեգիստր Արայիկ Առաքելյանին

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Պարոն Առաքելյան.

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի հիման վրա մինչև օրս Ձեր կողմից ղեկավարվող կադաստրի մարմին որքան գործեր են ներկայացվել պետական գրանցում ստանալու նպատակով, դրանցից քանիսն են մերժվել և քանիսն են գրանցում ստացել: Ինչպես նաև գրանցում ստացած կամ մերժված բնակելի կառույցների ցանկի մասին տեղեկատվության հարցմանն ի պատասխան Դուք մեզ գրավոր տեղեկացրել եք, որ խնդրվող տեղեկատվությունը կարող եք տրամադրել միայն սահմանված վճարի մուծման անդորրագիր ներկայացնելու դեպքում:

Սույն գրությամբ խնդրում ենք Ձեզ մեզ հայտնել, թե վերոհիշյալ տեղեկատվության համար մենք որքան գումար և որ հաշվեհամարին ենք մուծելու:

Կանխավ հայտնում ենք մեր երախտագիտությունն աջակցության համար:

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի
24.11.2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՄՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

ՀՀ. Ք. ԳՅՈՒՄՐԻ, ԱԲՈՎՅԱՆ 248
ՀԵՌ. /0312/ 5-31-67,

«20» 12 2010Թ.
Գ-3592

«Քաղաքական մշակույթի և
համաձայնությունների զարգացման
«Շիրակի Կենտրոն»ՀԿ»
նախագահ՝ Վ.Թումասյանին

Ի պատասխան Ձեր 24.11.2010թ գրության.

Հայտնում ենք,որ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Տ/Ս-ը գործող օրենսդրությանն համապատասխան տեղեկատվություն են տրամադրում պետական գրանցում ստացած անշարժ գույքի վերաբերյալ:

ԱԳԿ Գյումրու տ/ս ղեկավար-
անշարժ գույքի պետական ռեգիստր՝ Ա.Առաքելյան

կատարող՝
Ա.Վարդանյան